

Արցախահայության ցեղասպանությանը լծված Ադրբեջանը նոր տարածքներ է զավթում Սյունիքում. այս անգամ՝ Ներքին Հանդիմերձակայքում... Մինչ այդ ականատես էինք 2020-ի դեկտեմբերի 18-ի խայտառակությանը, ապա՝ Շուշուի անդամահատմանը, հետո՝ Սև լճի արևելյան և հարավարևելյան հատվածի զավթմանը, Գլուխ Ձագենձորը լեռնագագաթի անբսիային, որտեղից վերահսկվում է Գորիսի ամբողջ տարածքը: Ականատես էինք Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն մայրուղիների գլխավոր հանգույցների օկուպացմանը, Մեծ Իշխանասարի արևմտյան և հարավարևմտյան ստորոտի գրավմանը...

Չորեքշաբթի
23 մարտի 2022թ.
№ 6 (572)

ՀԻՍՏԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ
ՊԱՏԱՍԿԱՆԱՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
2 1 0 0 6 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Եվ ես - տխուր, ինչպես վկան Նարեկացի, Ե՛վ զարհուրյալ այնպես, և՛ մենակյաց, Չարհուրելի կյանքի հանդեպ անօգ կանգնած՝ Ես ո՛ւմ դիմեմ, դ՛վ Տեր, - արդ՝ Քեզանից բացի:
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՏ



Արցախի Հանրապետությունում կրկին դադարեցվել է գազամատակարարումը

Արցախում մարտի 21-ին դադարեցված գազամատակարարումը դեռ չի վերականգնվել. ռուսական խաղաղապահ զորակազմի հրամանատարությունը բանակցություններ է վարում ադրբեջանական կողմի հետ:


Հիշեցնեք՝ «Արցախագազ» ՓԲԸ-ի հաղորդմամբ, մարտի 8-ին, ժամը 1:00-ի սահմանում, մայրուղային բարձր ճնշման գազատարի վնասման պատճառով Արցախի տարածքում խափանվել էր գազամատակարարումը:

Արցախի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից կատարված ուսումնասիրությունների և իրավապահ մարմինների հետ բնակարանների արդյունքում պարզվել էր, որ գազատարը վնասված է այն հատվածում, որը գտնվում է ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ:

Ադրբեջանական կողմը 9 օր խոչընդոտներ էր ստեղծում վնասված գազատար խողովակի վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար: Եվ միայն մարտի 16-ին, ըստ Արցախի տեղեկատվական շտաբի, Հայաստանի կառավարության ու ռուս խաղաղապահների աջակցությամբ իրականացվող բանակցությունների շնորհիվ՝ ադրբեջանական կողմն սկսել էր գազատարի վերանորոգման աշխատանքները, որոնք ավարտվել էին մարտի 19-ին:

Սակայն, մարտի 21-ին Արցախի տեղեկատվական շտաբը հաղորդագրությամբ տեղեկացրեց, որ ադրբեջանական կողմի ուղիղ միջամտության հետևանքով Արցախի Հանրապետությունում կրկին դադարեցվել է գազամատակարարումը:

«Մենք ունենք բավարար հիմքեր պնդելու, որ մարտի 8-ին պայթեցված գազատարի վերանորոգման աշխատանքների ընթացքում ադրբեջանական կողմը տեղադրել է փական, որի միջոցով էլ ժամեր առաջ դադարեցրել է գազամատակարարումը: Ադրբեջանը ստեղծված եղանակային անբարենպաստ պայմանները ծառայեցնում է մեր ազգաբնակչության համար հումանիտար լրացուցիչ խնդիրներ առաջացնելու նենգ գործին և դիմում հանցավոր քայլի: Իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվել է Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորակազմի հրամանատարությունը, որի հետ միասին Արցախի իշխանությունները գործադրում են համապատասխան ջանքեր գազամատակարարման վերականգնման նպատակով», - ասվում էր հաղորդագրության մեջ:



ՀԱՅՈՑ ՄԵԾ ՆԺԴԵՅԻ ՊԱՏԳԱՄԸ՝
«... Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի. առանց աշխարհագրական Հայաստանի այդ հզոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող»

Սյունիքի ութ գյուղի սահմանապահ ուղեկալների կառուցման ընթացքը

Հայաստանի Հանրապետության հարավարևելյան սահմանի պահպանության ամրապնդման նպատակով Սյունիքի մարզի 8 գյուղում մեկնարկել են Հայաստանի սահմանապահ զորքերի սահմանապահ ուղեկալների կառուցման աշխատանքները: Ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ այդ մասին ասաց ԱԱԾ տնօրենի տեղակալ Տիգրան Հարությունյանը:

«2021 թվականի ընթացքում առաջին փուլով իրականացվել է նշված սահմանապահ ուղեկալների շինարարական աշխատանքների 50 տոկոսը: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2022 թվականի ընթացքում», - ասաց Հարությունյանը:

ԱԱԾ տնօրենի տեղակալը նշեց, որ Հայաստանի սահմանապահ զորքերում 2021 թվականի ընթացքում կազմակերպվել և իրականացվել է ժամկետային զինծառայողների նախնական զինվորական պատրաստումը, լավարկվել են սահմանապահ զորքերի բոլոր կազմերի զինծառայողների պատրաստման և վերապատրաստման ուսումնական ծրագրերը՝ սահմանային անվտանգության ապահովման նոր մարտահրավերներին համահունչ, իրականացվել է սահմանապահ զորքերի անձնակազմի թվի ավելացում, իրականացվել են կազմ-հաստիքային փոփոխություններ, իրականացվել են սահմանային ստորաբաժանումների ժամանակավոր տեղակայման, ենթակառուցվածքների, ստորաբաժանումների տեղաշարժի նպատակով օգտագործվող սահմանային ճանապարհների կառուցման և վերանորոգման աշխատանքներ:



«Սահմանային շերտում տեղադրվել է նախագզուշացնող 55 վահանակ, 51 մոդուլային տնակ, տեղադրվել են տեսադիտարկման համակարգեր: Սահմանապահ ստորաբաժանումները համալրվել են անօդաչու թռչող սարքերով, համակարգչային տեխնիկայով, տեսաձայնագրող սարքերով և մոնիթորներով, մարդատար, բեռնատար և հատուկ նշանակության ավտոտեխնիկայով», - եզրափակեց Հարությունյանը:

15.03.2022

Ադրբեջանը նոր տարածքներ է զավթում Սյունիքում, այս անգամ՝ Ներքին Յանդի մերձակայքում



Ադրբեջանցի զինյալներն առաջ են եկել Ներքին Յանդի ուղղությամբ՝ հերթական անգամ դիրքավորվելով Սյունիքի տարածքում

Համացանցում սփռված տեղեկատվություն այն մասին, որ ադրբեջանական զինված ուժերը Կապան համայնքի Ներքին Յանդ գյուղում մոտ մեկ կիլոմետր առաջ են եկել: Հավելյալ տեղեկություններ ստանալու նպատակով հեռախոսագրույց ունեցանք գյուղի վարչական ղեկավար Խաչատուր Բաղդասարյանի հետ:

յուններ կան գյուղում: – Որպես այդպիսին՝ խուճապային տրամադրություններ չկան, բայց բնակչության շրջանում առկա է որոշակի անհանգստություն: Մի բարեբար տնկիներ էր ուղարկել, որ գյուղացիներն այգի հիմնեն, բայց այդ տարածքը դիտարկվում է հակառակորդի կողմից, մարդիկ վախենում են այդտեղ գյուղատնտեսական աշխատանքներ կատարել, – ասաց Խաչատուր Բաղդասարյանը:

Վարչական ղեկավարը նաև նշեց, որ Կապանի համայնքապետարանի՝ սահմանների անվտանգության գծով աշխատակիցներն ամեն օր լինում են գյուղում:

Այնուամենայնիվ, Կապանի սահմաններում տեղի ունեցած այս միջադեպը լուրջ խորհրդածությունների առատ նյութ պիտի լինի երկրի բարձրագույն իշխանությունների և պաշտպանության նախարարության բարձրաստիճան զինվորականության համար:

Ինչպե՞ս կարելի է չիջել Լժդեհի խոսքը՝ թուրքի մի հանցանքը ներքին, կնշանակի երկու նորն արտոնել...

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ
15.03.2022

ՊՆ-ի հայտարարությունը զարմանալի էր ինձ համար. կամ դիտավորյալ աղավաղում են իրականությունը կամ ՊՆ վերադասին այդպես են զեկուցել. Փարսյանը Ներքին Յանդում ադրբեջանցիների առաջխաղացման մասին



ArmDaily.am-ի խմբագրություն մարտի 14-ին զանգահարել էր Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Յանդ բնակավայրի բնակչուհի Յամիկ Ղազարյանն ու ահազանգել, որ պատահաբար հայտնաբերել են, որ իրենց գյուղի տարածքում ադրբեջանցիներ են տեղակայվել ու հինգ վրան ամրացրել:

ArmDaily.am-ի հետ զրույցում Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանն ասաց, որ Ներքին Յանդի բնակիչների ահազանգը համապատասխանում է իրականությանը:

«Գյուղացիների ասածը իրականություն է՝ գյուղացիներն են ճիշտ ասում: Մոտ 800 մետր շայաստանի տարածք ներթափանցում են իրականացրել: Ու դա նկատվեց մեր կողմից մարտ ամսվա սկզբին», – ասաց Փարսյանը:

Մեր հարցին, թե արդյո՞ք դա ադրբեջանցիների ինքնագործունեության հետևանք է, ասաց, որ ամենայն հավանականությամբ՝ այո, ադրբեջանցիների ինքնագործունեության հետևանք է:

Փարսյանը նշեց, որ այս առաջխաղացմամբ Կապան-Մեղրի միջպետական ճանապարհը վտանգի տակ չի դրվում՝ այդ առումով Կապան Մեղրի ճանապարհի նկատմամբ վերահսկողություն չունեն և այդ դիրքն այդ նշանակությունը չունի:

«Տեղի բնակիչների համար ադրբեջանցիների առաջխաղացումը լուրջ խնդիրներ է ստեղծում անասնապահության առումով, այն տարածքները, որտեղ գյուղացիները անասնապահությամբ էին զբաղվում՝ հիմա այդ տարածքները ադրբեջանցիների վերահսկողության ներքո են գտնվում և այլ խնդիրներ էլ է առաջացնում Ներքին Յանդի համար, որի մասին չեն ուզում բարձրաձայնել, որպեսզի թշնամին այդ մասին չտեղեկանա», – ասաց Փարսյանը:

Մեր հարցին, թե ՊՆ-ին ու Կառավարությանը դի՞մել է ու ի՞նչ պատասխան ստացել, ասաց. «Այսպես ասած՝ բնականաբար, ՊՆ-ի հայտարարությամբ»:

յունն ինձ համար շատ զարմանալի էր: Այդ հայտարարության հետ կապված զարմանալի էր, որովհետև այդ հայտարարությունը իրականությանը չէր համապատասխանում, և թեկուզ դրա համար կարծում եմ, որ այդ հայտարարության երկու պատճառ կարող է լինել: Առաջինն այն է, որ դիտավորյալ իրականություն են խեղաթյուրում, և երկրորդն էլ, թեկուզ կարող է ասածս միամիտ հնչի, բայց հնարավոր է, որ տեղեկացված չլինեն: Իսկ ինչի՞ են ասում հնարավոր է, որ տեղեկացված չլինեն, որովհետև այդպես կարծելու հիմքեր ունեն, որովհետև մի քանի օր առաջ այս ուղղությամբ ամենաբարձրաստիճան պատասխանատուին հարց եմ ուղղել դրա հետ կապված և նա գրեթե նույն բովանդակությամբ փորձում էր ինձ ներկայացնել այն ամենը, ինչ որ ՊՆ-ն հայտարարեց: Եվ այստեղ իմ մեջ այն կարծիքն է ձևավորվում, որ միգրացիոն այդպես են զեկուցել, ինձ մոտ նման կարծիք է ձևավորվել, որ այստեղի պատասխանատուն կարող է այդպես զեկուցած լինի ՊՆ-ի իր վերադասին: Դրա համար եմ ասում, որ նման հայտարարության երկու պատճառ կարող է լինել՝ կամ դիտավորյալ իրականությունը աղավաղում են կամ տեղեկացված չեն: Իսկ ինչի՞ տեղեկացված չեն՝ հնարավոր է սխալ լինի զեկուցված, որովհետև ինձ էլ էին փորձում այդպես ներկայացնել», – ասաց Փարսյանը:

Մեր հարցին, որ պարբերաբար այցելում է Ներքին Յանդ, ինչպիսի՞ն է բնակիչների հոգեբանական վիճակը, ասաց, որ Ներքին Յանդ այցելում են նաև իր տեղակալները՝ հատկապես անվտանգության գծով տեղակալն ու խորհրդակալն անընդհատ հանդիպումներ են ունենում բնակիչների հետ:

«Բնականաբար անհանգստացած են», – եզրափակեց Գևորգ Փարսյանը:

16.03.2022

Հարց Ազգային Ժողովի սյունեցի պատգամավորներին

Հայաստանի Հանրապետության խորհրդարանում երբեք այսքան սյունեցի պատգամավոր չենք ունեցել՝ Արմեն Խաչատրյան, Արթուր Սարգսյան, Կարեն Յամբարձումյան, Աննա Գրիգորյան, Նարեկ Ղահրամանյան, Դավիթ Դանիելյան, Մարինե Ղազարյան, Մխիթար Չաբարյան:

Բայց և երբեք Սյունիքն այսքան փորձությունների չի ենթարկվել՝ հատկապես անվտանգության խնդիրների առումով:

2020թ. դեկտեմբերի 18, 2021թ. մայիսի 12, ապա՝ Գյուլի Ձազեմորդ լեռնագագաթի նվաճում, որտեղից վերահսկվում է Գորիսի ամբողջ տարածաշրջանը, այնուհետև՝ Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն մայրուղիների առանցքային հանգույցների անեքսիա, դրանից առաջ՝ Տեղ գյուղի վարելահողերի և արտավայրերի մի մասի բռնազավթում, հիմա էլ՝ Ներքին Յանդի մերձակայքի զավթում...

Ձեզնից ոչ մեկը, բնականաբար, ուղղափառ իմաստով կուսակցական չէ և չի կարող այդպիսին լինել՝ որբան ճանաչում եմք...

Ձեզնից յուրաքանչյուրը որևէ իշխա-

նավորությունից հետո կարող է հայտնվել և (ամենայն հավանականությամբ) կհայտնվի միանգամայն այլ բևեռում՝ հանգամանքներից կախված...

Բայց Սյունիքը մեկն է և բոլորինս է... Այստեղ օրումեջ դրսից պաշտոնավարման եկող բիրդանաղաները կգան ու կգնան: Իսկ դու՞ք...

Ի՞նչ կարծիք ունեք ստեղծված իրավիճակի վերաբերյալ, ինչպե՞ս եք պատկերացնում էլքը և, առհասարակ, ի՞նչ է կատարվում Սյունիքի շուրջ:

Շատ հետաքրքիր է լսել յուրաքանչյուրիդ կարծիքը, բանզի դուք և ձեզանից յուրաքանչյուրն իշխանության մաս է կազմում:

Սպասում եմք ձեր արձագանքին, ինչն էլ հաճույքով կներկայացնենք ընթերցողին...

Իսկ եթե պատշաճ չհամարեք պատասխանել, եթե սեփական կարծիք չկարողանաք հայտնել՝ մենք, հավատացած եղեք, չենք զարմանա...

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»
18.03.2022

Պաշտպանության նախարարության հայտարարությունը՝ Ներքին Յանդի մասին, իրականությանը չի համապատասխանում. Արման Թաթոյան

ՀՀ պաշտպանության նախարարության հայտարարությունը՝ կապված Ներքին Յանդի հետ, իրականությանը չի համապատասխանում: Դա ՀՀ ինքնիշխան տարածքը Ադրբեջանին զիջող և բնակչությանը վտանգի տակ դնող հայտարարություն է:

Մասնավորապես, այս պահին առկա են առնվազն հետևյալ փաստերը.

1. Ադրբեջանական զինված ծառայողները մոտ 2 շաբաթ առաջ մինչև 1 կիլոմետր հանգիստ ներխուժել են ու տեղակայվել Հայաստանի, մասնավորապես՝ Կապան համայնքի Ներքին Յանդ գյուղի տարածքում, այդ թվում՝ վրաններ տեղադրելով: Ավելի ճշգրիտ՝ խոսքը Ներքին Յանդի վարչական տարածքում գտնվող Նախկին գյուղի մասին է:
2. Ներխուժելուց հետո ադրբեջանական զինված ծառայողները սկսել են իրենց հա-



մար դեպի «իրենց նոր դիրքը» տանող ճանապարհ կառուցել, այդ թվում՝ տեխնիկայի օգտագործմամբ: Աշխատանքները դադարեցրել են միայն վերջին մի քանի օրվա եղանակային պայմանների, մասնավորապես՝ ձյան պատճառով:

Մոտ տասը օր Սյունիքում ձյուն էր տեղում. բնության նման քմահաճույքին, մինչդեռ մարզը պատրաստ չէր



Շինուհայրի խաչմերուկ-Կապան ճանապարհը՝ կաթվածահար

Յայաստանի հարավային շրջանները՝ Մեղրին, Քաջարանը, Կապանը, ինչպես և Իրանի Իսլամական Հանրապետությունը Գորիս- Երևան (Մ-2) մայրուղուն միացնող ճանապարհը կաթվածահար վիճակում է...

Շինուհայրի խաչմերուկից մինչև Կապան տասնյակ, եթե ոչ հարյուրավոր մեքենաներ են կանգնած, մի մասը՝ ձյան մեջ արգելափակված և տեղից շարժվելու անկարող:

Երեք օր շարունակ ձյան շրջափակման մեջ են հայտնվել Իրանից Հայաստան եկող տասնյակ ավտոբուսներ, որոնց մեջ, բնականաբար, նաև երեխաներ են ու կանայք:

Շրջափակման մեջ են հայտնվել ծանրաբաշ բեռնատարներ, նաև՝ կցորդով, որոնց թափաբեռն Հայաստանում գնված և Պարսկաստան տեղափոխվող խոշոր եղջերավոր անասուններ են. այդպես՝ երեք օր շարունակ...

Բեռնատարների առանձնապես մեծ կուտակումներ կան Կապան բաղաբնի մուտքում, Սատանի կամրջում, Շինուհայրի խաչմերուկում և բազմաթիվ այլ վայրերում:

Այդ ամենը գուցե և բնության հերթական քմահաճ տարերք համարելիք, եթե... Եթե ճանապարհին ձյունամաքիչ մեքենաները կանոնավոր աշխատանք իրականացնեին:

Միակ տեղը, որ նման աշխատանքի ակախատես եղանակ՝ Սատանի կամրջից մինչև Տաթև ընկած ոլորաններն էին:

Իսկ Վերին Խոտանան-Տաթև հատվածում գոնե մեկ ձյունամաքիչ մեքենա չէր աշխատում (ժամը 13-ի դրությամբ):

Երկու անսարք ձյունամաքիչ գտնվում էին Տանձավերի մերձակայքում՝ օգնություն աղերսող:

Եվ, այդ բոլորով հանդերձ, ամեն ինչ չէ, որ մեզանում հուսահատեցնող է. երկու օր առաջ մարզում ստեղծվել է ճանապարհային այդ խնդիրների լուծումը համակարգող օպերատիվ շտաբ, ինչի մասին, իբրև կարևոր իրադարձություն, ազդարարեց նաև Արմենպրես լրատվական գործակալությունը...

Իսկ ավելի լուրջ՝ որպեսզի այդ շտաբի ծնունդն ու գովազդը համընդհանուր բեմիծաղի տեղիք չտան, պետք է գոնե մի քանի հավելյալ ձյունամաքիչ մեքենա անհապաղ տրամադրվի (օգնության կարգով) այդ ճանապարհի պահպանությունն իրականացնող ընկերություններին:

«Ճանապարհային դեպարտամենտ» կոչվող հիմնադրամն էլ այսպիսի իրավիճակներում ավելի խոհեմ կգտնվի, եթե ընդհանրապես լուրջ: Հայտարարում է, թե իբր ձյունամաքիչ թույլ չի տալիս մաքրել խնդրի առարկա մայրուղին, ինչն իրականությանը չի համապատասխանում:

Մարտի 21-ի առավոտվանից, օրինակ, գրեթե դադարել էին ձյան տեղումները Շինուհայրի խաչմերուկ-Կապան մայրուղում, իսկ քամին դեռևս գուրջ չէր բարձրացրել: Իրավիճակը բարենպաստ է նաև հիմա՝ կեսօրից հետո: Եվ ուրեմն՝ պարունայք, ինչու՞ անցանելի չեք դարձնում Շինուհայրի խաչմերուկ-Կապան ավտոմայրուղին, ինչու՞ եք կաթվա-

Գորիսում արտակարգ իրավիճակ էր՝ պայմանավորված ձյան առատ տեղումներով

Սյունիքի մարզում մի քանի օր առաջ սկիզբ առած ձյան տեղումները ոչ միայն չեն դադարում, այլև ահագնանում են...

Հիմա արդեն կարող ենք ստույգ արձանագրել՝ բնության նման քմահաճույքին դիմագրավելու նույնպես պատրաստ չէինք...

Դա հատկապես երևում է Գորիս քաղաքում և տարածաշրջանային այդ կենտրոնը մերձակա գյուղերին կապող ճանապարհներին:

Իհարկե, Մ-2 մայրուղում և Շինուհայրի խաչմերուկից Տաթև ձգվող ճանապարհին ջանադրաբար աշխատում են «Ոսմար» ՍՊ ընկերության ձյունամաքիչ մեքենաները:

Գորիս քաղաքում էլ աշխատում է համայնքային տնտեսությանը պատկանող ձյունամաքիչ մեքենան, բայց...

Ստեղծված անսովոր վիճակը, որի նախադեպն ունեցել ենք տասնյակ տարիներ առաջ, պետք է արդեն իսկ ոտքի հանած լիներ տարածաշրջանի բոլոր այն շինկազմակերպություններին և տնտեսվարող մյուս

տուրյեկներին, որոնք ունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

Գորիսում բազմաթիվ շինարարական կազմակերպություններ ունենք, ովքեր տարիներ շարունակ ինչ-ինչ մրցույթներում և ինչ-ինչ եղանակով հաղթող են ճանաչվել ու պետապատվերով ոչ միայն գոյատևել, այլև փթթել...

Ինչո՞ւ չպետք է հենց այդ կազմակերպությունները (առաջին հերթին) իրենց տեխնիկական հնարավորությունները ծառայեցնեն ճանապարհների և փողոցների մաքրմանը:

Հետո ի՞նչ, որ նրանց ասող-հուշող չկա...

Հետո ի՞նչ, որ ասողներն էլ դա չեն հասկանում...

Այո, անհրաժեշտ է ոտքի հանել լրացուցիչ ձյունամաքիչ տեխնիկա:

Պետք է նաև նկատի ունենալ, որ ձյան տեղումները դադարելուց հետո (ինչպես ավանդաբար տեղի է ունենում այս կողմերում) ձնաբուբե անխուսափելի է լինելու՝ դրանից բխող հետևանքներով:

20.03.2022

ծահար արել Հայաստանի համար կյանքի այդ ճանապարհը:

Մեկ հարց ևս, որ շտապ պարզաբանման կարիք ունի. արդյո՞ք պետական մակարդակով ֆինանսավորվում է Վերին Խոտանան-Տանձավեր ճանապարհահատվածի

պահպանությունը, եթե այո, ապա ո՞ր ընկերությանն է վստահված մայրուղու այդ հատվածի պահպանությունը և ինչու՞ է ձախողվել դրա պահպանությունը:

21.03.2022

3. Ներքին Հանդում բնակիչներն ի սկզբանե տեղյակ են այս ներխուժման մասին, նրանք են նկատել աղբբեջանական զինծառայողներին և Կառավարությունից բացատրությունների բացակայության պայմաններում մարդիկ հայտնվել են անորոշության ու անհանգստության մեջ:

4. Վերջին մի քանի օրերին սկսվեցին արդարացի հանրային քննարկումներ աղբբեջանական զինված ծառայողների կողմից ՀՀ տարածք ներխուժելու վերաբերյալ, եղան լրատվամիջոցների հրապարակումներ:

5. ՀՀ պաշտպանության նախարարությունն ստիպված հանդես եկավ ներխուժումը «կտրականապես հերքող» պաշտոնական հայտարարությամբ և նշեց.

«Նշված [այսինքն՝ Ներքին Հանդի] հատվածում, որը գտնվում է աղբբեջանական վերահսկողության տակ, աղբբեջանական ստորաբաժանումներն ունեն մի քանի դիրք, որոնք, կահավորված չլինելու պատճառով, ձմեռային ժամանակահատվածում հնարավոր չէ օգտագործել: Հիմա, կապված եղանակային պայմանների փոփոխության հետ, աղբբեջանական զինվորականներն ընդամենը վերադառնում են այդ դիրքերը»:

Պաշտպանության նախարարության այս հայտարարությունը չի համապատասխանում

իրականությանը:

Նախ, Ներքին Հանդի և հարակից մի քանի գյուղի բնակիչների վկայությամբ՝ որոշակի ձյուն եկել է միայն դեկտեմբեր և հունվար ամիսներին, բայց անանցանելի պայմաններ չեն առաջացել առհասարակ, իսկ փետրվարին եղանակային պայմանները եղել են գարնանային բնույթի:

Ես ինքս այս տարածքներում եղել եմ 2021թ. դեկտեմբերի սկզբին, ինչպես նաև 2022թ. փետրվարի 16-ին և 17-ին և կարող եմ համոզված պնդել, որ եղանակային պայմանները 2 այցերի ժամանակ էլ բնույթով գարնանային էին, գրունտային ճանապարհներն անգամ առավելապես չոր էին:

Հետևաբար, հակառակ ՊԼ-ի պնդման՝ եղանակային պայմանների պատճառով տարածք օգտագործելու անհնարինության մասին խոսք լինել չի կարող:

Նշվածից բացի, այդ տարածքում աղբբեջանական զինված դիրքեր կամ այլ տեղակայումներ երբևէ չեն եղել: Չեն եղել ու հիմա էլ չկան ՀՀ ՉԽՆԿ-ի ուժերի դիրքեր կամ այլ տեղակայումներ:

Ավելին, գյուղի բնակիչների վկայությամբ՝ այն վայրերից, որտեղ ներխուժել ու ապօրինաբար տեղակայվել են աղբբեջանական

Սյունիքի մարզ (Ներքին Հանդ բնակավայր) գործուղված աշխատանքային խումբն իրականացրել է հրատապ փաստահավաք աշխատանքներ

Փաստահավաք աշխատանքի համար կարևոր նշանակություն են ունեցել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանման հավաքագրված տեղեկությունները, քանի որ մինչև հրապարակային ահագանգերի ստացումը Սյունիքի մեր մարզային ստորաբաժանման ներկայացուցիչները մշտական կապի մեջ են եղել Կապանի համայնքապետարանի, այդ թվում՝ Ներքին Հանդի վարչական ղեկավարի հետ:

Փաստահավաք աշխատանքային խումբը Ներքին Հանդ բնակավայր այցի ընթացքում հանդիպել է բնակավայրի վարչական ղեկավարի և բնակիչների հետ, տեղում դիտարկել է գերեզմանատան, Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի ու Շինատեղ կոչվող գյուղատեղիի հարակից տարածքները և փաստագ-

րել է բնակիչների իրավունքների իրացման խնդիրները:

Չրոպցների ու քննարկումների արդյունքում արձանագրվել է, որ Նոր Հանդի գերեզմանատան, Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի և Շինատեղ կոչվող գյուղատեղիի հարակից բլրի վրա 2022 թվականի մարտի սկզբին աղբբեջանական զինված ուժերի տեղակայումը, այդ թվում՝ մի քանի վրանների տեղադրումը և իրենց դիրքերից թիկունք կառուցվող Նոր ճանապարհները, Նոր են: Բնակիչները նախկինում նշված տարածքում չեն նկատել աղբբեջանական զինծառայողների կամ որևէ դիրք՝ նշելով, որ դեռ երկու ամիս առաջ այդ տեղանքից փայտ են հավաքել: Ավելին, ըստ բնակիչների՝ աղբբեջանական զինծառայողներին առաջինը նկատել է գյուղի հովիվը:

Շարունակությունը էջ 4

Շարունակությունը էջ 4

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն աշխատանքային այցով եղել է Սյունիքի մարզում

Զորամասերից մեկում սպաների հետ հանդիպմանը նախարարն անդրադարձել է անցած օրերին զորամիավորման ենթակա զորամասերում արձանագրված միջադեպերին: Սուրեն Պապիկյանն ընդգծել է, որ տեղի ունեցածը որոշ ստորաբաժանումներում կարգապահության, ինչպես նաև առանձին զինծառայողների բարոյահոգեբանական ոչ պատշաճ մակարդակի հետևանք է: Լսելով միջադեպերի վերաբերյալ պատասխանատու սպաների զեկույցները՝ պաշտպանական գերատեսչության ղեկավարը զորամիավորման հրամանատարին տվել է ցուցումներ և հանձնարարականներ, նմանօրինակ դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ: Աշխատանքային այցի ընթացքում Սուրեն Պապիկյանը եղել է նաև Ներքին Հանդիմանային հարակից սահմանագծում:



Կան աշխատանքների ընթացքին: 18.03.2022

ԱԳՆ-ն դատապարտում է ՄԱԿ-ին Ադրբեջանի անդամակցության 30-ամյակին նվիրված արարողության կազմակերպումը Արցախի օկուպացված Շուշի քաղաքում

Արցախի ԱԳՆ նախարարությունը հայտարարություն է տարածել ՄԱԿ-ին Ադրբեջանի անդամակցության 30-ամյակին նվիրված միջոցառումը Շուշիում կազմակերպելու կապակցությամբ:

Արցախի ԱԳՆ-ի հայտարարության մեջ, մասնավորապես, նշված է.

«Պաշտոնական Բաբուն, իր ոճին համահունչ, շարունակում է ապակառուցողական քաղաքականությունը՝ ուղղված Արցախի նկատմամբ իր ագրեսիայի հետևանքների օրինականացմանը՝ փորձելով այդ գործընթացում ներգրավել և օգտագործել նաև միջազգային հանրությանն ու տարբեր կառույցներին: Այդ քաղաքականության հերթական դրսևորում է Միավորված ազգերի կազմակերպությանը Ադրբեջանի անդամակցության 30-ամյակին նվիրված հանդիսավոր արարողության կազմակերպումը Արցախի օկուպացված Շուշի քաղաքում և միջոցառումները ՄԱԿ-ի ու Նրա կառույցների

ներկայացուցիչների մասնակցությունը: Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը խստիվ դատապարտում է նման միջոցառման անցկացումը Շուշիում:

ՄԱԿ-ի ներկայացուցիչների մասնակցությունը Ադրբեջանի ագրեսիայի և հայտապաշտության գլխավոր թիրախներից մեկը հանդիսացող բնակավայրում կազմակերպվող միջոցառումը հակասում է միջազգային այս կազմակերպության գործունեության հիմնարկային սկզբունքներին, զարգացնում է առաջնությունը և, անկասկած, օգտագործվելու է Ադրբեջանի կողմից իր մարդատյաց և ագրեսիվ քաղաքականության լեգիտիմացման նպատակով: Սա նաև լուրջ հարված է ՄԱԿ-ի հեղինակությանը, ինչը բացասական ազդեցություն կունենա կազմակերպության աշխատանքների արդյունավետության վրա»:

18.03.2022

Պաշտպանության նախարարության հայտարարությունը՝ Ներքին Հանդիմանին, իրականությանը չի համապատասխանում. Արման Թաթոյան

Սկիզբը՝ էջ 3

զինված ծառայողները, իրենք ազատ օգտվել են նախորդող ողջ ժամանակահատվածում, այդ թվում՝ արտավայրերից ու հողատարածքներից. ադրբեջանական որևէ ծառայող այդ վայրերում երբևէ չի եղել:

Այս պահին ադրբեջանական զինված ծառայողները տեղակայված են գյուղի անվտանգության ու մարդկանց իրավունքների տեսանկյունից բոլոր առումներով բացարձակ անընդունելի վայրում՝ անմիջական դիտարկման տակ ունենալով գյուղը:

Ուստի, ՀՀ պաշտպանության նախարարության հայտարարությունը բացարձակ դատապարտելի է. դրանով փաստացի ՀՀ ինքնիշխան տարածքի մասը զիջվում է Ադրբեջանին:

Այդ հայտարարությունը, ամբողջությամբ անտեսելով մարդկանց անվտանգությունը, լեգիտիմացնում է ադրբեջանական զինվորականների իրավապահ որևէ հիմք չունեցող ներկայությունը Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդիմանի տարածքում:

ՀՀ պաշտպանության նախարարության հայտարարությունը նաև խիստ խնդրահարույց է ՀՀ ՀՈՒ և ՀՀ ԱԱԾ սահմանապահ ծառայողների անվտանգության ու կյանքի իրավունքի տեսանկյունից:

Դրանից բացի, խիստ մտահոգիչ է, որ Պաշտպանության նախարարության հայտարարությունում օգտագործված են ձևակերպումներ, որոնք արդարացնում են ադրբեջանական շինված ուժերի արարքները, նրանց անմեղ են ներկայացնում Ներքին Հանդիմանի մեր երկրի ողջ բնակչության առաջ:

Դեռ այսպանից հետո կառավարությունը մարդկանց պահում է անորոշության մեջ ու անզան բացատրություն չի տալիս, թե արդեն 2 շաբաթ է, ինչ են անում ադրբեջանական զինված ծառայողները Ներքին Հանդիմանում: Հետո էլ մարդկանց մեղադրում է, թե խուճապ են տարածում: Հի՛ կարելի դժգոհություն չառաջացնելու ու սեփական թողտվությունը ծածկելու համար մարդկանց պահել անորոշության ու անհանգստության մեջ:

Ո՞ր իրավունքով է ՀՀ պաշտպանության նախարարությունն անում ՀՀ ինքնիշխան տարածքի մասը Ադրբեջանին զիջող, ադրբեջանական իրավագրությունը ապօրինաբար հաստատող և ողջ երկրի անվտանգությունը վնասող հայտարարությունը:

Այդ հայտարարությամբ սեփական ժողովրդից ու արտաքին աշխարհից թաքցվում են ադրբեջանական հանցավոր արարքները: Բավական է ձեր անպատասխանատու հայտարարություններով խաթարեք մեր ողջ բնակչության ու երկրի անվտանգությունը, նպաստեք մարդկանց իրավունքների խախտումներին:

16.03.2022



Նորընտիր նախագահ Վահագն Խաչատրյանը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում այցելել է Դավիթ Մաթևոսյանի շիրիմին

Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնի ստանձնման հանդիսավոր արարողությունից անմիջապես հետո նորընտիր նախագահ Վահագն Խաչատրյանն այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն, հարգանքի տուրք մատուցել իրենց կյանքը Հայրենիքի պաշտպանության համար զոհաբերած հերոսներին:

Նախագահ Խաչատրյանը ծաղիկներ է դրել ՀՀ Ազգային հերոս Վազգեն Մարգարյանի, զորավար Անդրանիկի շիրիմներին, պատվով պահակախմբի ուղեկցությամբ ծաղկեպսակ է դրել Հայրենիքի ազատության և անկախության համար զոհվածների սիրանքը հավերժացնող հուշապատին:

15.03.2022

Արցախից ՌԴ խաղաղապահ զորակազմի մի մասի դուրսբերման լուրը չի համապատասխանում իրականությանը

Վերջին օրերին արցախ-ադրբեջանական շփման գծում հակառակորդի ակտիվ ագրեսիվ պահվածքը դրսևորվել է Արցախի Պաշտպանության բանակի՝ տարբեր բնակավայրերին կից տեղակայված դիրքերի հրաձգային զինատեսակներով գնդակոծություններով: Այս մասին հաղորդագրություն է տարածել Արցախի Անվտանգության խորհրդի գրասենյակը:

«Արցախի զինված ստորաբաժանների արդեն ավելացել է նաև ականանտերի կիրառումը: Շեշտում ենք, որ հրադադարի խախտման թշնամական գործողությունների թիրախ է ընտրված խաղաղ բնակչությունը՝ նպատակ ունենալով առաջացնել խուճապ:

Ստորաբաժանների հետագա զարգացումները կասեցնելու նպատակով Անվտանգության խորհրդի գրասենյակը համագործակցում է Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորակազմի հետ: Ձեռնարկվում են անհետևանքալի միջոցներ՝ հակառակորդին

ստիպելու հավատարիմ մնալ կրակի դադարեցման պայմանավորվածություններին:

Միևնույն ժամանակ, ադրբեջանական տեղեկատվական հարթակներում տարածվող տեղեկությունները, որոնց համաձայն՝ Արցախից ՌԴ խաղաղապահ զորակազմն իր ուժերի մի մասը դուրս է բերում Ուկրաինա տեղափոխելու նպատակով, չի համապատասխանում իրականությանը: Արցախում տեղակայված ՌԴ խաղաղապահ զորակազմը շարունակում է իրականացնել իր առաքելությունը՝ համաձայն 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթներին:

Հորդորում ենք բնակչությանը՝ գերծ մնալ խուճապային տրամադրություններից: Իրավիճակը լիարժեք վերահսկվում է Արցախի Հանրապետության իշխանությունների և ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից», – նշված է հաղորդագրության մեջ:

10.03.2022

Սյունիքի մարզ (Ներքին Հանդիման բնակավայր) գործուղված աշխատանքային խումբն իրականացրել է հրատապ փաստահավաք աշխատանքներ

Սկիզբը՝ էջ 3

Ստեղծված իրավիճակում կարևոր է արձանագրել, որ Ներքին Հանդիման բնակավայրի բնակիչների հիմնական զբաղմունքն է անասնապահությունը և հողագործությունը:

Ադրբեջանական զինված ուժերի կողմից Նոր դիրքավորման արդյունքում ուղիղ նշանառության ու դիտարկման տակ են հայտնվել բնակավայրի գերեզմանատունը, Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողը, եկեղեցին, ինչպես նաև գյուղի արտավայրերի մեծ մասը՝ մոտ 50 հա, ինչպես նաև մի քանի գյուղացիների վարելահողերը և այգիները: Անասնապահության ու գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչների համար այս իրավիճակը լրջագույն դժվարություններ է ստեղծել իրենց ապրուստը հոգալու համար:

Թեպետ գյուղում չկային խուճապային տրամադրություններ, սակայն գյուղացիներն անորոշ վիճակում են եղել ստեղծված իրավիճակի հետ կապված:

Աշխատանքային խումբն արձանագրել է

նաև, որ 2022 թվականի մարտի 16-ին Ներքին Հանդիման բնակավայրում բնակիչների հետ հանդիպել են Սյունիքի մարզպետը և ՊՆ հրամանատարական կազմի ներկայացուցիչներ: Բացի այդ, այս օրերին բնակիչների հետ պարբերաբար հանդիպումներ են իրականացրել Կապան համայնքի ղեկավարն ու նրա տեղակալները:

Այցի ընթացքում աշխատանքային խումբը հանդիպումներ է ունեցել նաև Կապան համայնքի ղեկավարի, Սյունիքի մարզպետարանի և այլ իրավասու պաշտոնատար անձանց հետ: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների այցի արդյունքներն ու հետևությունները, ինչպես նաև նշված և այլ խնդիրների լուծման առաջարկություններն ուղարկվել են կառավարությանը:

Մարդու իրավունքների պաշտպանը շարունակելու է հետամուտ լինել սահմանամերձ բնակավայրերի, այդ թվում՝ Ներքին Հանդիմանի բնակիչների խնդիրների լուծման հարցերին:

WWW.OMBUDS.AM
21.03.2022


Չավարտված պատերազմի հերթական զոհերը Սյունիքում



Էդուարդ Ռուստամյան

Մարտի 17-ին, ժամը 10:30-ի սահմաններում, հանրապետության հարավային ուղղությամբ տեղակայված 33 ՊՆ զորամասի տարածքում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, շարքային Էդուարդ Ռուստամյանի (ծնվ. 2003 թ.) դին՝ հրազենային վիրավորումով: Ընթացում է քննություն՝ դեպի հանգամանքները լիարժեք պարզելու նպատակով: 19-ամյա զինծառայողը Արարատի մարզի Լոր կյանք համայնքից էր: Նա տասը ամսվա զինծառայող էր:

Ալբերտ Սիրոյան



Մարտական հեռակետում նախօրեին՝ մարտի 16-ին, ծնոտի շրջանում հրազենային վիրավորումով մահացած հայտնաբերված Ալբերտ Սիրոյանը 2020թ. դեկտեմբերին էր զորակոչվել բանակ, ծառայում էր Սյունիքի մարզում: Նա Արտաշատի Վարդաշեն համայնքից էր: Վարդաշենի նախկին համայնքապետ

Գևորգ Բարխուդյանն ասաց, որ Ալբերտ Սիրոյանն անհայր է մեծացել. «Ավելի վաղ տարիքում մահացել էր հայրը, իրենից մեծ քույր ունի, տան միակ որդին էր ինքը, սոցիալական անապահով պայմաններում են ապրում»:

«Ալբերտը շատ հարգված ու հասարակ ընտանիքից էր: Համայնքում շատ էին սիրում իրեն, շատ հանգիստ տղա էր: Սիրողական մակարդակով ֆուտբոլով էր զբաղվում: Իր նպատակն ընտանիքին օգնելն էր», - պատմեցին համայնքապետարանից:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ մարտի 16-ին, ժամը 21:10-ի սահմաններում, հանրապետության հարավ-արևելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքերից մեկում հայտնաբերվել է 33 ՊՆ զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Ալբերտ Լևոնի Սիրոյանի (ծնվ. 2002թ) դին՝ ծնոտի շրջանում հրազենային վիրավորումով:

17.03.2022

Հանրային քննարկման և ներկայացվել արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասին օրենքի փոփոխությունները



ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հանրային քննարկման ենթ ներկայացրել արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասին օրենքի փոփոխությունները, որով առաջարկում ենք.

- ներդնել քոլեջների և ուսումնարանների աշխատողների ատեստավորման և տարակարգի մեխանիզմներ՝ դրույթաչափի փոփոխության և հավելվածարի սահմանման հնարավորություններով,
 - քոլեջներում և ուսումնարաններում հանրակրթական առարկա դասավանդողներին տալ հնարավորություն՝ ներգրավվել Հանրակրթության օրենքով ուսուցիչների համար նախատեսված ծրագրերին,
 - ներդնել տրանսպորտային ծախսերի փոհատուցման մեխանիզմ ուսանողներին և դասախոսների համար,
 - քոլեջների և ուսումնարանների համար սահմանել, որ դրանք կարող են ունենալ կազմակերպատարական ցանկացած ձև, որ նախատեսված է օրենսդրությամբ, ինչով կստեղծվի իրավական հնարավորություն՝ մասնավորի հետ համատեղ կառավարման մոդելների ամբողջական ներդրման համար:
- Նշենք, որ GIZ-ի գործընկերների աջակցությամբ մշակվել է մասնագիտական կրթության և ուսուցման ամբողջությամբ նոր օրենքը, որը ներկայումս աշխատանքային քննարկման փուլում է: Հաջվի առնելով, որ նոր օրենքն ավելի մանրամասն ու երկար քննարկումների կարիք ունի՝ որոշել ենք ավելի հրատապ խնդիրները կարգավորել այս փուլում: //

Կապանի հնգամյա զարգացման ծրագրի հանրային քննարկումը

Մարտի 15-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի է ունեցել «Կապան համայնքի 2022-2026թթ. զարգացման ծրագրի» վերաբերյալ հանրային քննարկումը, որը վարում էր համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը:

Ներկա էին համայնքապետարանի աշխատակիցներ, վարչական ղեկավարներ, ավագանու անդամներ, հասարակական կազմակերպություններ և ակտիվ բաղաբացիներ:

Ծրագիրն ըստ բաժինների և ոլորտների ներկայացրել է համայնքապետարանի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի պետ Համալի Դոկյանը: Հանրային լուսն անցել է ակտիվ քննարկումների մթնոլորտում: 34 ներկայացուցիչների, համայնքի զարգացմամբ մտահոգ երիտասարդների կողմից հնչել են հետաքրքիր առաջարկներ և բազմաթիվ հարցեր, որոնց համայնքի ղեկավարը տվել է սպառնալից և բովանդակային պատասխաններ:

Նախքան այս քննարկումը համայնքի ղեկավարի կողմից ստեղծվել էր աշխատանքային խումբ տվյալ փաստաթղթի մշակման



համար, իսկ ավագանու որոշմամբ կազմավորվել էր խորհրդակցական մարմին, որը և համարվում է այս աշխատանքների պատասխանատուն: Նախկին կայացել են մի շարք քննարկումներ, որտեղ աշխատանքային խմբի անդամները ներկայացրել են կա-

տարածը, արել առաջարկություններ և դիտորդություններ, որոնք և ընդգրկվել են ծրագրի մեջ: Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մարտի 24-ին ներկայացվելու է Կապան համայնքի ավագանու հաստատմամբ:

15.03.2022

Մեկնարկում է Կապանի կրթական նոր մոդելի իրագործումը. պահուստային ֆոնդից միջոցներ են հատկացվել

Կառավարության որոշմամբ պետական բյուջեի պահուստային ֆոնդից 33 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հատկացվել է 67 մլն 125 հազար դրամ գումար՝ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի կրթական նոր ծառայությունների ներդրման ծրագրի մեկնարկման և «Ճանապարհաչինարար» արձանի գեղարվեստական լուսավորման համար:

Նախագծի ներկայացման ժամանակ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ հատկացումն արվում է 33 կառավարության կրթական ռեֆորմների շարունակականությունն ապահովելու հանձնառության շրջանակում:

Վահրամ Դումանյանի տեղեկացմամբ՝ վերոնշյալ գումարից շուրջ 60 մլն դրամը նախատեսված է Կապան խոշորացված համայնքի 13 գյուղական բնակավայրերում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման նպատակով կրթահամալիրների ստեղծման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության համար: Նախատեսված

է իրականացնել կրթահամալիրների վերակառուցման և կառուցման աշխատանքներ: Ստորև ներկայացվում են նախատեսվող աշխատանքները՝ ըստ բնակավայրերի.

Կրթահամալիրների վերակառուցում. Աճանան, Օխտար, Արծվանիկ, Գեղանուշ, Սյունիք, Եղեգ, Ծավ, Ճակատեն:

Նոր կրթահամալիրների կառուցում. Ներքին Հանր, Շիկահող:

Մոդուլային կրթական հաստատությունների կառուցում. Վերին Խոտանան, Դավիթբեկ, Եղվարդ:

Նշված բոլոր բնակավայրերը աշխատանքների ավարտից հետո կունենան ժամանակակից կրթական շենքային պայմաններ՝ ապահովված համապատասխան լաբորատորիաներով, մարզադահլիճներով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Նոր կրթահամալիրներում կկազմակերպվեն նախադպրոցական և հանրակրթական ծառայություններ, ինչպես նաև կիրականացվեն լրացուցիչ կրթական ծրագրեր՝ ըստ համայնքների կարիքների: Նոր կրթօջախները կծառայեն նաև որպես բնակավայրի մշակութային և մարզական կենտրոններ:



Նոր կրթահամալիրներից 7-ը կծառայեն նաև շրջակա բնակավայրերի երեխաների համար: Այդ նպատակով կգործարկվեն 8 երթուղիներ՝ դրանց սպասարկման համար ձեռքբերված տրանսպորտային միջոցներով, որոնք կունենան վարորդ և ուղեկցորդ: ԿԳՄՍ նախարարը նաև տեղեկացրել

է, որ Կապանի ծրագրի իրագործման կազմակերպչական խնդիրները տեղում արձանագրելու նպատակով նախարարության ներկայացուցիչները Հայաստանի մանուկների հիմնադրամի և այլ գործընկերների հետ վերջերս այցելել են Սյունիք: Տեղում կատարված դիտարկումների արդյունքներով որոշվել է Սիսիանի թիվ 1 հիմնական, Կապանի թիվ 9 ավագ և Գորիսի թիվ 4 ավագ դպրոցները ներառել Կառավարության ծրագրով հիմնադրվող 300 դպրոցների պետական ծրագրում: Քննարկվում է նաև «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի աջակցությամբ Կապանի գյուղական բնակավայրերից մեկում սմարթ կենտրոնի կառուցման ծրագիրը: Արձանի հիմնադրումը կատարվել էր 2021 թվականի՝ հուլիսին ներդրման ծրագրով:

Կառավարության նիստի ընթացքում 33 վարչապետ Լիկոլ Փաշինյանը, անդրադառնալով պահուստային ֆոնդից ԿԳՄՍ ոլորտներին ուղղված հատկացումներին, ընդգծել է, որ կրթության համակարգի բարելավումը պետական համալիր ռազմավարություն է, և դրա ամբողջական իրագործումը միայն մեկ գերատեսչության խնդիր չէ:

«Կրթության ոլորտում Կառավարության ծրագրով նախատեսված ծրագրերը պետական առաջնահերթություն են», - շեշտել է նա:

17.03.2022



1920 թ. մարտի 23-26-ը թուրք-ադրբեջանական ուժերի կողմից կազմակերպված հայերի կոտորած


Սկզբը՝ էջ 7

Մեր նկուղը քարակույտերով է լցված, որոնց տակ հավատացած էի, թե կգտնեմ իմ պահ տված հարստության արկղը-շորեր, արծաթեղեններ, ձեռագրեր... Փորեցիկը, փորեցիկը մարդ ու կին, երկու հոգով և ոչինչ չգտանք: Ո՛չ մի Նշմար, ո՛չ մի հետք: Լուռ հոգոց միայն արձակեցինք ու ետ դարձանք մեր աշխատանքից ձեռնուձայն, ցեխի ու քրտինքի մեջ կորած: Աշնանային ցողերից բարձրացած կանաչ խոտի վրա փռեցինք մեր կտավե խուրձիկը, հանեցինք մեր պաշար գարի հացն ու սոխը, մի-մի քար դրեցինք մեր տակը և վերջին անգամ մեր պարտեզում հաց ուտելով՝ վեր կացանք, համբուրեցինք մեր տան պատերը, մեր դրած քարերը, մեր ձեռքի դիպած վայրերը և լուռ ու անխոս, լցված սրտով և խեղդված կոկորդով հրաժեշտ տվինք անձայն լացող ավերակներին և հեռացանք... Մեր ոտները չէին շարժվում, մեր սիրտը չէր հեռանում... Կրկին դարձանք, կրկին համբուրեցինք և այս անգամ ոչ թե հեռացանք, այլ զսկածի պես վազեցինք, որ կարողանանք հատրթած լինել մեր ոտքերի կապանքներին, մեր վշտին, իսկ նրանք դեռ լայիս էին մեր ետևից, դեռ կանչում էին մեզ...

...Անցանք... ավերակներ, ավերակներ, սարսափ ազդող ամայություն. մարդկային զանգեր, մորթազերծ ոսկրոտիք և մեր փախուստը... Բողոքում էին կարծես մարդկային զազանության զոհ գնացած ո՛վ գիտի քանի մեզ ծանոթ ու բարեկամ, հարազատ ու ազգական անձնավորությունների այդ դիակների ոսկորները, որոնց չէինք մոտենում, չէինք խոսեցնում, այլ խորշում էինք, իբրև ժանտախտից, ու փախչում էինք երեսներս ծածկած...

Անցանք սոսկումների շարքը: Քանի՞ հատ էին նրանք, քանի՞ բաժանմունք, քանի՞ վարչություն, քանի՞ դիվան. թիվ ու համար չկար: Մեր դիմումների նպատակն էր, որ թույլ տային մեր տան ավերակներում պատերի ծայրերին մնացած թիթեղներից մի 50 հատ գյուղը տանելու՝ այնտեղ մեր հայրական ավերակ սենյակներից մեկի զլուխը ծածկելու և մեջը պատսպարվելու: Մեկը խոստացավ... Մյուսը թե՛ քաղաքը պիտի վերաշինենք, երրորդը՝ չէ՛, ասաց, պատերազմական ավար է, թույլ չենք տա տանելու:

Եվ այսպես՝ ձեռնուձայն: Մեր թափառումների յուրաքանչյուր քայլափոխում մեզ հանդիպում էին հայ աղջիկներ՝ ժառանգություն մնացած թուրքերին՝ բաղաբի կործանումից և հայերի գերությունից: Մենք լսել էինք, բայց չէինք տեսել նրանց՝ թուրքի կին դարձած: Որն իր հազուստում, որը թրթռական չաղրայի մեջ, հինայած... Մեր հարևանի աղջկան պատահեցինք՝ դռան



ձեռքից դեպի փողոց նայելիս: Կինս մոտեցավ, կանչեց անուրը: Նա կնոջս բարևն ընդունեց սառնասրտությամբ:

– Շա՛տ կան ձեզանից այստեղ, – հարցրեց կինս:

– Շատ:

– Ովքե՛ր են, ասա՛, մեր թաղից մնացածները:

– Չեմ կարող... չեմ տեսել: Վերքերս մի քրքրեք, կոտորվեմ ձեզ պես հայերը, – ասաց նա թախծությամբ և դուռը երեսներին պիտի շրիկացրեց:

Ահա այսպես, հայ բուլլիկները, թուրքերի բարեկամներն ու ընկերները չուզեցին գերությունից ազատել հայ աղջիկներին, նրանք ուզում էին հնդիկներին ազատել անզիջողների ձեռքից: Ռուսները նավթի համար ծախեցին հայ ժողովրդին...

Իսկ թուրքերը՝ կեղծավոր, խորամանկ, դիպվմատ, նեճ, ստախոս՝ իրենց մոնղոլական ցեղային այս հատկությունով զինված:

Մի դարաբաղի ծեր հայ ասել է ադրբեջանցի պետության առաջ գալու նկատմամբ. «Օսմանցի և անզիջողի (Օսմանցի և Անզիջող) քոնթի եկան և ցկնեցին Ադրբեջանի պետությունը»:

Խեղճ հայ ժողովուրդ՝ անտեր, անպաշտպան...

ԱՎԵՏԻԵ ԻՍԱԿԱՎՅԱՆ
«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ», 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1988 թ.

Խոսք հիշատակի

Կյանքից հեռացել է Իզնատ Բեգլարյանը

2022 թ. փետրվարի 5-ին, կարճատև հիվանդությունից հետո, մահկանացուն է կնքել Գորիսի, Կապանի ՆԳ բաժնիների, Այունյացի մարզի դատական համակարգի երկարամյա աշխատող, փորձառու իրավաբան Իզնատ Վազգենի Բեգլարյանը:

Ծնվել է 1955թ. ապրիլի 19-ին, Գորիսի շրջանի Վաղատուր (Նախկինում Բայանդուր) գյուղում:

1962թ. սեպտեմբերի 1-ից հաճախել է Վաղատուրի ութամյա դպրոցը, որն ավարտել է 1970-ին: 1972թ. ավարտել է Խնածախի միջնակարգ դպրոցը: 1973-75թթ. ծառայել է խորհրդային բանակի զորամասերից մեկում: Ծառայության ավարտից հետո վերադարձել է Հայաստան՝ աշխատանքի ընդունվել Երևանի շինարարական կազմակերպություններից մեկում բանվոր:

1977թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, որը հաջողությամբ ավարտել է 1982թ.: Նույն տարում աշխատանքի է անցել Գորիսի ՆԳ բաժնում՝ անչափահասների տեսուչ: Այդտեղ պաշտոնավարել է մինչև 1986 թվականը: 1986-ին տեղափոխվել է Կապան և աշխատանքի անցել ՆԳ բաժնի անչափահասների տեսչությունում տեսուչ: Պաշտոնավարել է մինչև 1990թ., որից հետո նշանակվել Գորիսի ՆԳ բաժնի պետի տեղակալ:

Արցախյան շարժման տարիներին Իզնատ Բեգլարյանն ակտիվորեն մասնակցել է Գորիսի, Կապանի սահմանամերձ գյուղերի պաշտպանությանը, մասնակցել մարտական գործողությունների: 1991թ. ապրիլին գերեզմարվել է Շուռնուխ գյուղի պաշտպանական դիրքերում՝ մարտական առաջադրանք կատարելիս: Գերությունից ազատվել է 1991թ. հունիսի 5-ին և շարունակել կյանքը Կապանում:



Նակել պաշտոնավարել Գորիսի ՆԳ բաժնում պետի տեղակալ:

1998թ. Իզնատ Բեգլարյանը մասնակցել է դատավորների թափուր տեղի համար հայտարարված մրցույթին, անցել մրցույթով, ստացել դատավորի կարգավիճակ և աշխատանքի անցել Այունյացի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր (ստավայրը՝ Գորիս): Այդտեղ աշխատել է մինչև 2008 թվականը, իսկ 2008-2020 թվականներին դատավոր էր Սիսիանի ստավայրում:

2020թ. անցել է կենսաթոշակի: Ամուսնացած էր՝ ունի մեկ ուսուր և երկու դուստր:

Վաստակաշատ իրավաբանի, հմուտ դատավորի, լավագույն մարդու հիշատակը միշտ կմնա իր ընտանիքի անդամների, գործընկերների, իրեն ճանաչող բոլոր մարդկանց սրտերում:

Անտարակույց, Իզնատ Բեգլարյանը Այունյացի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ամենահեղինակավոր ու անաչառ դատավորն էր, ինչի համար և մեծ հեղինակություն էր վայելում Այունյացի մարզում և հատկապես Գորիսի տարածաշրջանում: **##**

Լենվարդ Խաչատրյան

Կյանքի 96-րդ տարում մեզանից հեռացավ Կապան տան անվանի մտավորական, դասավարության մեջ իր հաստատուն խոսքն ամրագրած, սիրված և ճանաչված մանկավարժ Լենվարդ Խաչատրյանը:

Ծնվել է 1926թ. դեկտեմբերի 8-ին Կապանի Վերին Խոտանան գյուղում: Ընտանիքում եղել է ինը երեխա:

Սկզբնական կրթությունը ստացել է գուղի յոթամյա, այնուհետև Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Երկու տարի Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետում սովորելուց հետո, ընտանեկան հանգամանքներից ելնելով, ստիպված է եղել թողնել բարձրագույն կրթությունը և վերադառնալ հայրենի գյուղ:

1945 թ. ամուսնացել է համապատասխան Լենվարդի Գեորգիանի հետ: Թվում էր, թե եկել էր պատերազմի վերջերս ամոքելու ժամանակը, բայց ճակատագիրն անողորմ գտնվեց ընտանիքի հոր, ամուսնու, գյուղական դպրոցի տնօրենի հանդեպ, և շատ ու շատ մեր հայրենակիցների հետ միասին 1949 թ. սեպտեմբերին նրան աքսորեցին հեռավոր Ուրալի Սոլիկամսկ քաղաք: Վեց տարի անց, փորձությունները հաղթահարած, ընտանիքի հայրը վերադառնում է աքսորավայրից:

Տիկին Լենվարդն աշխատանքային մկրտությունը ստացել է հայրենի գյուղի մանկապարտեզում, որից հետո աշխատանքային ճանապարհ է անցել Վերին Խոտանանի ութամյա, հետագայում միջ-



նակարգ դպրոցում՝ որպես դասավար աշխատելով 56 երկար ու ձիգ տարիներ: Գեց այդտեղ էլ նկատել են նրա մանկավարժական բարձր որակները, որի մասին երախտագիտությամբ էին խոսում մանկավարժության բարձունքների հասած և փրկյալները:

Չնայած իր համար դժվարին ժամանակներին՝ շարունակեց մնալ մանկավարժական կյանքի բարախուճ զարկերակ:

2004 թվականին կենսաթոշակի անցնելուց հետո հարազատ դպրոցից ու իր սաներից երբեք չէր կտրվել, ապրում էր նրանց հետ, ուրախանում նրանց հաջողություններով:

Հայրենասեր մտավորականի, մանկավարժության անխոնջ երախտավորի հիշատակը միշտ կմնա մանկավարժական հանրության, իր բոլոր աշակերտների և նրան ճանաչողների սրտերում: **##**

Այունյաց երկիր
ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՆՅՈՒՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏ-ՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԳՍԳՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԷՍՆԱՆՅԱՆ**

3301, Այունյացի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՐԱԿԱՆ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է: Թե՛ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 23.03.2022թ.: